Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ Կոտայքի մարզի «Քաղսիի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի երաժշտության (10 դասաժամ) ուսուցչի թափուր տեղի համար:

Ուսուցչի պաշտոնի համար նախատեսված վարձատրությունը որոշվում է՝ ըստ դասաբաշխման:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է ըստ ՀՀ ԿԳՄՍ նախարարության հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

1) դիմում (Ձև 1), մեկ լուսանկար 3×4 չափսի,
2) բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),
3) անձը հաստատող փաստաթուղթ,
4) «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),
5) ինքնակենսագրություն (Ձև 5),
6) այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
7) ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ զինգրքույկ,
8) հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթուղթ (առկայության դեպքում),
9) որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Փաստաթղթերի բնօրինակները համեմատվում են պատճենների հետ, որից հետո բնօրինակները վերադարձվում են: Մինչև փաստաթղթերի ընդունման ավարտը մասնակիցը կարող է համալրել անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը:

Փաստաթղթերն ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից մինչև **օգոստոսի 23-ը** ներառյալ, ամեն օր՝ **ժամը** 10:00-ից 14:00, բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:

Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի՝ ըստ կարգի:

Մրուցույթը տեղի կունենա **2022թ. օգոստոսի 26-ին՝ ժամը 14:00-ին**, ՀՀ Կոտայքի մարզի Քաղսիի միջնակարգ դպրոցում, հասցեն՝ Կոտայքի մարզ, գ. Քաղսի, 11 փ., 1-ին փակուղի:

Տեղեկությունների համար զանգահարել 093-65-17-90 հեռախոսահամարով: